

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Զոլար

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Ե Ի Կ

Թանոցման անոթ
20 սանթիմ



ԺՐԱԿՈՒՄՔ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Գրութեանը եւս չեն տրուիր

ՓՈԹՈՐԿՈՒՄ

(ԱՌ ԶԱՅՐԻԿ)

Ահա սառ ու ձիւն պատեց անտառը,
Ու գիտենք որքան տրտում եւ դուռն արդ
Աշունը անցաւ, եկաւ ձմեռը
Ձեռն տակ սառեցան մանուշակ ու վարդ . . .
Պատուհանիդ մօտ կանգնած միայնակ,
Կը տանջուիս դուռն մութ խորհուրդներու մէջ.
Դուրսը փարսափ կը տիրէ համակ . . .
Քամին մահազանգ մ'է դաժան, անվերջ . . .

Եւ ալ ո՛չ ծաղիկ, ո՛չ տերեւ, ո՛չ վարդ,
—Քաղցր ժպիտը արշալոյսներու,
Ո՛չ դալար լիկներն կը հնչեն զուարթ,
Փարնան մեծ երգը քեզ օրհներգելու .
Ամենքն ալ անցան երազներու պէս,
Ամենքն ալ ծածկեց սառն, ցուրտ ու ձիւնը,
Փակուած սենեկիդ մէջ կը մտածես,
Թէ արդեօք կուգա՞յ նորէն գարունը .

Մենք կը թափառինք վշտով ծանրաբեռ,
Պանդուխտ, հալածուած թռչուններու պէս,
Քենէ զատ, Հայրիկ, չունինք մենք այլ տէր,
Մեր սէրն ալ յոյսն ալ հաւատքն ալ դուռն ես .
Թող մենք թափառինք օտարութեան մէջ,
Պայքարինք, ջարդուինք, անիծենք, խոկանք,
Փարիսաներու պէս կոխկրտուած անվերջ
Ձուռնք անտրտուն աշխարհէ աշխարհ .

Օն ծունկի կ'իջնուի անոնց աղօթիւր,
Որ պարտուեցան ցաւին ցնցումէն,
Անոնց՝ որ մեռան, և անոնց՝ որ դեռ
Սովին ու ցուրտին մէջ լուռ կը հեծեն .
Ձեռքերդ հնայուածքդ երկինք բարձրացուր
Ով հայր, և սուրբի, մարգարէի նման
Հզօր, հայրաբար, Բարձեալին ցոյց տուր,
Ու հայցէ, որ չուտ հասնի դատաստան .

Դատաստան դահձին, ու սեւ, վատողի,
Աւեր աղէտի ձմեռն ու ձմեռն,
Դատաստան ոսկունք և պիղծ հեշտանքի
Մէջ հոգւով նեխած ամբարիշտներուն .
Անոնց՝ որ ցաւին ի տես անայլայլ,
Մերժեցին հոգալ դեղ եւ պալատան .
Անգամ մ'ալ հայցէ, անիծէ ո՛վ հայր
Շուտ, շուտ թող հասնի արդար դատաստան .

ԿԱՐԱՊԵՏ Մ . ՉԱՎՏԱՐԵԱՆ

Թուածուգ, 1905 Նոյեմբ. 28

ԵՐԿՈՒ

ԱՄՐԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Սուլթանը սպաննելու փորձին
հրապարակային դատավարու
թիւնը՝ որ երբ շարաթէ ի վեր
կը կատարուի Պոլսոյ եղեռնա-
դատ Ատեանին առջեւ և օրը օ-
րին կը հրատարակուի տեղւոյն
թուրք, հայ և օտար թերթե-
րուն մէջ, ըստ կառավարութեան
հրահանգին խորհրդածելու շատ
նիւթ կը մատակարարէ մեզ .

Մենք հոս չպիտի լքենք թէ
Սուլթանի մը սպանութեան փոր-
ձը պէտք է որ հայ յեղափոխ-
կութեան մը կողմէ ըլլար
և այդ փորձին յաջողութիւնը
ինչ բարիքներ ու ինչ չարիքներ
կրնար յառաջ բերել . Մեր հոս
քննելու և խորհրդածելու տե-
սակէտը թուրք կառավարութեան
այսօրուան բռնածղիւրքն է այդ
փորձին առթիւ հանդէպ Հայ ազ-
գին .

Ամբաստանիչ Ատեանի տեղե-
կագիրը զոր մեր ներկայ թուով
կը հրատարակենք, շատ որոշ
կերպով ցոյց կուտայ թուրք կա-
ռավարութեան անհաշտ ատելու-
թիւնը հայերու դէմ . Երկու-
զի պալատին մէջ խորհուած ու
գծուած այդ պաշտօնագիրը փաս-
տերու վրայ հիմնուած օրէնսդի-
տական ամբաստանագիր մը ըլ-
լալէ շատ հեռուէ, Հոն նախ փոր-
ձին բուն նպատակը Սուլթան
Համիտը սպաննել ըլլալը կը ծած-
կուի . և ասոր փոխարէն ցոյց
կը տրուի թէ Հայ յեղափոխա-
կանները ուղած են Ա. Օսմանեան
կայսրութեան քանդումը և այս նը
պատակին հասնելու համար թուրք
զինուորները այդ մահափոր-
ձով գրգռել որ օտար հպատակ-
ներու վրայ յարձակում մընեն,
որուն հետեւանք ըլլայ պետու-
թեանց և թուրքի միջեւ խը-
զում և օսմանեան երկիրներու բա-
ժանում . Բ. ամբաստանագիրը կը
ձգտի հայ յեղափոխութեան հազ-
ցնել անիշխանականի շապիկը .

Թէ՛ Ամբաստանիչ Ատեանին և թէ՛
ընդհ. Դատախազին ամբաստանու-
թիւնները աւելի ու աւելի այս եր-
կու կէտերուն վրայ կը դառնան .
Այսինքն ցոյց տալ թուրքին ու
ընդհանուր մահափախան աշ-
խարհին թէ Հայերը Օսմանեան
կայսրութեան և խալիֆայու-
թեան քանդումին կաշխատին, և
ցոյց տալ պետութեանց և քա-
ղաքակրթեալ աշխարհի թէ Հա-
յերը անիշխանականներ են և
իրենց հակամարդկային ծրա-
գիրներուն յաջողութեանը հա-
մար օտարահպատակներու ան-
մեղ արիւնը թափել տալ կը
ձգտին .

Բացատրութեան պէտք չկայ
թէ այս երկու ծանր ամբաստա-
նութիւններու առաջինովը թուրք
կառավարութիւնը կուզէ ամբողջ
խալաւ աշխարհը Հայոց թշնամի
ընել, բնաջնջել և տալու նպա-
տակաւ . Եւ իսկ երկրորդովը՝ պե-
տութիւնները ու քաղաքակրթ
աշխարհը նողկացնել Հայերէն .
Ահա Սուլթանին բուն նպատակը
որով նա հարկ դատեց հրապա-
րակային դատավարութիւն կա-
տարել և չափուած ու ձեւուած
սուտեր ու չափազանցութիւններ
հրամցնել Պոլսոյ թերթերուն
միջոցաւ թէ՛ մահափախան և թէ
քաղաքակրթ աշխարհներուն .

Արդ, թուրք կառավարութեան
այս վերջին լրբութեան ամբողջ
զգուշիւութիւնը մերկապարանոց
ընելու համար, մասնաւորապէս
պարտք կը ծանրանայ հայ յեղ .
Դաշնակցութեան վրայ, որ այլ-
ևս խզէ այդ մահափորձի մասին իր
լուծութիւնը և անգամ մըն ալ
միառմի թուելով օսմանեան ար-
դի ինքնակալին անքաւելի ու-
ճիրները, խոստովանի թէ ինք
որոշած էր միայն Սուլթանը ըս-
պաննել որպէսզի կայսրութեան
քրիստոնեայ ու խալաւ հպատակ-
ները ազատին համիտական դը-
ժոխային լուծէն և որպէսզի ա-
տով կարելի ըլլայ արդարութեան
հաւասարութեան և յառաջ-
գիմութեան նոր թուական մը
բանալ Արեւելքի և մասնաւորա-

պէս թուրքիայ ընդ որ ժողովուրդ-
ներուն համար, առանց խտրու-
թեան ազգի ու կրօնի:

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

Պագուի վերջին դէպքերը վեր-
ջապէս պատճառ եղեր են որ
տեղւոյնմէջ գոյութիւն ունեցող
ամեն ազգի յեղ կուսակցութիւն-
ները «Միացեալ Դաշնակցու-
թիւն» մը կազմեն, դիմադրելու
համար խուլիզաններու վայրա-
գութիւններուն եւ ստիկանա-
կան ու կառավարական էնթ-
րիքներուն:

Ահա առաջին յայտարարու-
թիւնը այդ Դաշնակցութեան.

Ինչպէս երեւում է, Բագուի վեր-
ջին սոսկալի դէպքերը մեծ յուզ-
մունք ու վրդովմունք են առաջ բե-
րել ծայրայեղ համարուած կուսակ-
ցութիւններին մէջ, եւ ահա նրանք
միացած ուժերով սպառնալիք են
կարգում հետեւեալ գրութեանը.

Ընկերներ եւ քաղաքացիներ.

Ահա մի քանի օր է, որ մեր յա-
ղաքը դարձել է գործունէութեան առ-
պարէզ խուլիզաններու համար, ու-
րոնք կազմուած են հասարակութեան
ամենազգուշիկ տարրերից: Հրձիգու-
թիւնները, կողոպուտները կատար-
ւում են անարգել, ոչ միայն չհան-
դիպելով դիմադրութեան կառավարու-
թեան կողմից, այլ յաճախ նոյն իսկ
նրա աչքերի առաջ եւ նրա մասնակ-
ցութեամբ:

Զինուորները խուլիզանների առաջ-
նորդութեամբ եւ նրանց հետ ձեռք
ձեռքի տուած հրացանների եւ թըն-
դանօթների հարուածներով խորտա-
կեալ են խաղաղ բնակիչների տները,
խուժում են նրանց բնակարաննե-
րը եւ անխնայ կոտորում ու սրի
ճարակ են դարձնում անպաշտպան
քաղաքացիներին:


«Ազգասիրական զգացմունքների»
այդպիսի վայրենի արտայայտութիւն-
նք մենք համարում ենք խաղաղա-
ների եւ նրանց ընկերակից պետա-
կան պաշտօնեաների կողմից մի զըզ-
ուելի յետադիմական շարժում՝ ուղ-

ղուած այն ազատական շարժման
դէմ, որի անդ ու գործարար ա-
լիքները գնում են խորտակելու՝
խայտառակ ինքնակալութեան թըշ-
ուում բեկորը:

Այժմ առաջ ունենալով այս հանգա-
մանքը՝ մենք, Բագուի գտնուող բո-
լոր յեղափոխական կազմակերպու-
թիւնների ներկայացուցիչներս, կազ-
մել ենք «Ընդհանուր Յեղ. Միացեալ
Դաշնակցութիւն», այդ Միացեալ Դաշ-
նակցութեան նպատակն է կազմել
ընդհանուր պատերազմական խումբ,
դիմադրելու համար այն վայրենի եւ
անպատկառ շարժման, որը կատար-
ւում է խուլիզանների միջոցով: Այդ
նպատակը իրագործելու համար Մի-
ացեալ Դաշնակցութիւնը որոշել է
կանգնելու ոչ մի միջոցի առաջ.
նա վճռել է իրոք զինել եւ զէնք,
եւ ուժով, եւ հուր, եւ սուր.
նա վճռել է միեւնոյն ժամանակ, ա-
մենախիստ տեղուկ ենթակից այն
բոլոր անձնաւորութիւններին, որոնք
հանդիսանում են ոգեւորիչներ եւ զե-
կալարներ անդիմապիք ամբար յե-
տադիմական տարրերի համար:

Յայտնելով այս մասին Պագուի
քաղաքացիներին՝ մենք ընդունում
լիայոյս ենք նրանց կատարեալ քա-
ջաւերութեան եւ աջակցութեան վե-
րաբերմամբ՝ դէպի այն գործունէու-
թիւնը, որին մենք ստիպուած ենք դի-
մելու՝ յետադիմական շարժումը եւ
նրա սահմանից դուրս եկած վայրե-
նի կրքերը զսպելու համար:

1. Ռուս. Սոց. Դէմ. Բան. Կուս.
Բագուի Կոմիտէ.
2. Ռուս. Սոց. Դէմ. Բան. Կուս.
Բագ. Բան. Միութիւն.
3. Սոց. Դէմ. Բան. Հայ Կազմ.
Բագուի Կոմիտէ.
4. Սիւնիստ. Սոց. Կուսակցութիւն.
5. Ռուս. Սոց. Յեղ. Կուսակցու-
թիւն.
6. Հայ. Յեղ. Դաշնակցութեան Պա-
գուի Կենդ. Կոմիտէ.
7. Հնչակեան կուսակցութիւն.
8. Մահադական Սոց. — Դէմ. Կու-
սակցութիւն «Հուժած»:
9. Մահադակ. Յեղ. Կուսակցու-
թիւն «Յիտոթիֆադ»:



Սիւնեան, Թընկեր Սիւնի, Եօրտանա-
քի, Գրիգոր Գալայճեան, Եւանքո Գա-
նա Էֆէնտիները եւ Հիւսնի ու Սա-
աւէտտին պէյերը:

Ներկայ գլխուրդ սմբատանեալը
Պէլճիապատակ ժօրիս թուրքերէն
չը գիտնալուն համար, թարգման նը-
շանակուեցաւ պաշտօնեայ Վասիլ Էֆ-
նախագահը ներկայ ամբաստան-
եալներուն ինքնութիւնը քննելէ յի-
տող, փախստական ամբաստանեալնե-
րուն անունները միասին կարգաց-
ուեցան եւ բացակայութիւններն հաս-
տատուեցաւ: Ընդհ. դատարանը պա-
շտան անունը դատել թացակայու-
թեան անունով, քանի որ՝ կատար-
ուած օրինական բոլոր ձեւակեր-
պութեանց հակառակ՝ դատարան չեն
ներկայացած: Դատարանը յետ խոր-
հրդակցութեան որոշեց փախստա-
կաններուն դատել թացակայութեան
տեանով: Եւսոյ կարգադրուեցաւ ամ-
բաստանիչ ատեանին հետեւեալ տե-
ղեկագիրը:

— Դեր-Նախագահ՝ Մէհմետ Թէվֆիկ

Մ Ա Ք Ո Ւ Ր Օ Դ

Ի Բ Բ Ե Ի Ա Բ Գ Ե Լ Ի Զ Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

Մարտի օրի աւետարանը շարունակ
կը քարոզուի թիւղնիւրու կողմէն.
բայց հասարակաց ընդունելութիւն մը
գտած չէ դեռ: Մարտիկ բաւական
յօժար են տաք օրերուն դուրս ել-
լիլ բաց օդին մէջ, բայց ինդիքը բո-
լորովին կը տարբերի երբ ձմրան ցուրտ
օրերն հասնին: Առողջապահական հան-
դէսի մը առաջնորդող մէկ յօդուածին մէջ
մասնաւորապէս շեշտուած կը գտե-
նենք ցուրտ եղանակաց մէջ մասնա-
ւանդ բաց օդին ունեցած գերազանց
օգտակարութիւնը:

Ցուրտ ու մաքուր օդը մասնաւոր-
ապէս յարմար է մարդու մարմնին
զանազան գործարանները զրգոնելու:
Անոր ազդեցութեամբ սովորականէն
աւելի արագ եւ ուժգին կը բարա-
խէ սիրտը ու հետեւապէս աւելի
ստատարիւն կը ձաւթ մարմնին:
Արեան մէջի կարմիր հատիկներուն
թիւն ալ կ'աւելնայ այսպիսի օդ
մը շնչելով: Ցուրտ օդը տաք օդէն
աւելի թթուածին կը պարունակէ
նաեւ, Բարեխառնութեան իջնադու-
նաւիմատ կը խտանայ տեղի մը օդը
եւ փոքրագոյն ծաւալ մը կատանայ:
Հաշուուած է թէ օդի ծաւալին մէկ
հինգհարիւրերորդը կը պակսի բարե-
խառնութեան իւրաքանչիւր աստի-
ճանի իջնելուն հետ: Բաղդատէ այ-
ժմ ամառնային տաք օրուան մը
եւ ձմեռուան ցուրտ օրուան մը քա-
րեխառնութիւններուն միջեւ եղած
անադին տարբերութիւնը. առաջինը
սովորաբար 100 աստիճան, իսկ երկ-
րորդը 30 միայն: Այսպէս, ձմրան,
նոյնիսկ չափաւորապէս ցուրտ մէկ
օրուան բարեխառնութիւնը 70 աս-
տիճան վար է ամրան տաքութիւնէն:
Հետեւաբար, վերջէն ներկայացուած
հաշուոյն համեմատ, ձմրան եղանա-
կին մէջ օդին ունեցած ծաւալը
մէկ երկնորդ պակաս է ամրան
եղանակին մէջ՝ օդի ունեցած ծաւա-
լին, եւ ցուրտ օդը 6 անգամ մի-
այն շնչելով այնչափ թթուածին ներս
կ'ընդունի մարդ, որչափ կրնայ ըն-
դունիլ տաք օդը 7 անգամ շնչելով:
Ցուրտ օդին մէջ, ուրեմն, մարմինը
մէկ երկնորդ անգամ աւելի թըշ-
ութեամբ կը շնչէ: Քանի որ՝ կրնայ
տաք օդի մէջ: Մարմնի ջերմութեան

մէջ այսքան աւելի անատութեամբ
ներս մտնող թթուածինն կարեւոր-
ութիւնը պիտի կրնանք գնահատել,
երբ նկատի առնենք անոր ունեցած
կենսական պաշտօնը:

Ձմեռ ատեն աւելի պայծառութեամբ
կը վատի կրակը. այնչափ ծանօթ
իրողութիւն մըն է այս որ շատ տեղ
սովորութիւն՝ եղած է ըսել. « Ձմեռը
գալու վրայ է. տե՛ս ինչպէս պայ-
ծառ կը վատի կրակը »: Ցուրտ եւ
զանազան աւելի տաքութիւն եւ լոյս
կ'ուտայ կրակը, որովհետեւ մէկ երկ-
նորդ «աւելի» թթուածին իջնելով կ'սպառէ
նոյնչափ ժամանակի մէջ որչափ պիտի
սպառէր ամառը:

Այսպէս է մարդու մարմնին ալ:
Կենսիկ կրակը աւելի պայծառ կը
վատի ցուրտ օդին մէջ: Լաւ պտղա-
ւը՝ ձմրուան ցուրտ անատութեան
մեծ արտօժակ կատեղծէ նախաճա-
շի, կարագնէն թուեալոր նիւթերու
արտաքուստը որ շարունակ կը կազ-
մուի մարմնին մէջ, եւ աւելի մեծ
փութիւնութեամբ մը յառաջ կը շար-
ժէ կենսիկ ամբողջ հոսանքը: Երբ
բաւական անատ թթուածին չգտնու-
ի կենսիկ կրակը վատելու եւ սը-
նունդի նիւթերն ու մարմնին մա-
շուժն յառաջ եկած ինտատկար ար-
տադրութիւններն սպառելու, այն ա-
տեն այդ աւելորդ նիւթերուն մէկ
մեծ մասը՝ իւրեւ. կիսկատար վառած
ածուխ՝ կը մնայ մարմնին մէջ եւ
կ'ապականէ ու կը թուեալոր զայն:
Միզային թթուն մարմնին դուրս
հոսող այսպիսի կիսկատանձ նիւթերէ
կը բաղկանայ:

Նստողական կենսիկ մը վարել ստի-
պուողներն բաւական թթուածին չեն
ընդունիր, իրենց թոքերուն մէջ:
Պէտք եղածին չափ չեն լայնար ա-
նոնց թոքերը, որով բաւականաչափ
օդ չեն կրնար ներշնչել: Դարձեալ,
անօր վիճակի մը մէջ զը գտնու-
ի տաք օդը, զոր 7 անգամ շնչելու
է մարդ որպէսզի կարող ըլլայ այն-
չափ թթուածին ընդունիլ որչափ
պիտի ընդունէր եթէ իր օնեակէն
դուրս բաց օդի մը մէջ 6 անգամ միայն
շնչէր: Այսպիսիք, գործն կենսիկ մըն
ալ չուենալով, յամբ ու անկատար
շնչողութիւն մը կ'ուենան, եւ հե-
տեւաբար մարմնի պէտքերուն ան-
բաւական կ'ըլլայ իրենց ներս ընդու-
նած թթուածինը: Իսկ դուրսը՝ ցուրտ
ու մաքուր օդին մէջ մարմնամարդ

ամբաստանուած են հետեւեալները.

Պելճիական հպատակ Անվէրսի
էտուառ Ժօրիս Ժիւրա, Ճօնա արա-
թեանի զոնապան Գոչհիսարցի Մա-
նուկ Իւմիտեան, Կոսովէթ արա-
թեանի զոնապան Սվազի Յովհան-
նէս Ղարպեան, այս վերջինն քեռ-
որդին Յովսէփ Թօրալեան, Սվազի
սրճեփ Նշան Յովհաննէսեան, իշլէ-
մէճի Երուսիդ Յովհաննէս, չըլուն
գրածախ Մուշեցի Եղիա Գահվէճեան,
աւստրիական հիւանդանոցի զոնապան
Սվազի Լեւաթէ Նահապետեան, Ախ-
լաթի Յիւր Պաղտեանի Սէօրլ տ'Տօ-
րիանի սպասարար Պիթլիսի Պօղոս
Բէշէճեան եւ Մանուկ Բէշէճեան, Պիթ-
լիսի իսպիլ Բիլօհան, Երկաթագործ
Մանօլ, Երկաթագործ գալֆա Միթօ,
միջնորդ Մաթիօ, դարձեալ միջնորդ
Միխալ, Սվազի խոհարար Հաճի
Նշան Միխալեան, եւ փախստականք
Տիկիլ Ժօրիս Աննա Նէլլէնա, Լի-
րաթիս ուրիշ անուամբ Սաֆի, Տի-
կիլ Սօֆի Ռիւս ուրիշ անուամբ
Մարի Զօրճ, Օր Բուպիւնա, կառա-

ՍՈՒԼԹԱՆԸ ՄՊԱՆՆԵՆՈՒ
ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ Եղեռնադատ ատեանին
առջեւ, նոյնմ. 12 ին, հրապարակային
դատավարութիւնը սկսուեցաւ:

Դատավարութեան կը նախագահէր
նախագահ Հիւսի պէյ, եւ կանգամ-
ակցէին Սիւլեյման Եֆէնդի, Գաթիբէլ
Գաթիբէլեան Էֆէնդիները եւ Եսահեա
ու Ճէմիլ պէյերը: Ընդհանուր դա-
տախազն էր Նէճէմէտտին պէյ, եւ
արձանագրութեան քարտուղարի պաշ-
տօնը կը վարէին Սիւլէյման, Սուպի
եւ Յէրիտ պէյերը:

Դատավարութեան պահուն իրենց
մասնաւոր տեղերը գրաւած էին
պիլճիական հիւսապատարանի թարգ-
մաններէն պ. Մարքէթիլ, հելլէնա-
կան գանչէլէրի թարգմաններէն պ.
Ջիլօրա ու ամբաստանեալներուն
պաշտպան-փաստաբանները՝ Խնդիր

ընող մէկը աւելի արագ կը շնչէ եւ աւելի մեծ քանակութեամբ թթուածին կ'ընդունի, որով կարճատեւէն կը վառին կը հասնին մարմնոյ թունաւոր արտադրութիւններն, եւ մաքուր ու ապահով կը մնայ ամբողջ դրութիւնը:

Այս է պատճառը որ ցուրտ օդը խիստ նպաստաւոր է յղային մարդոց: Օդի թթուածինը աւելի առատութեամբ ներշնչուելով կը վառէ կը սպառէ բոլոր այն թոյններն որ ջիւղերը կը գրգռեն, եւ այսպէս ջղային արտաւորութիւն կը փրկուի մարդը:

Յոգնած մէկը աւելի շուտով կը կազդուրի ու կը հանգստանայ ցուրտ օդ շնչելով քան թէ տաք: Որովհետեւ յոգնութիւնը թոյներու եւ աւելորդ նիւթերու կուտակման արդիւնք է պարզապէս, որ գործելու ատեն յատկ կ'ուզան ու կը մնան մարմնոյ մէջ: Ցուրտ օդի հետ ներշնչուող առատ թթուածինը շուտով կը վառէ կը հատցնէ այդ թունաւոր նիւթերը, եւ այսպէս կ'անցնէ մարդու յոգնութիւնը:

Ցուրտ օդը սկսած է ճանչցուիլ իբրեւ մեծնէն ազդեցիկ բուժիչ երկարատեւ տխրութեանց, Ալպիան լեռներու մէջ, Տէվոփ վրայ, հաստատուած է ցուրտ օդի բուժարան մը: Հոն գարմանուող իւրաքանչիւր հիւանդ պարտաւորէ՝ իր կարողութեան համեմատ՝ օրը կէս ժամէն մինչեւ ժամ մը պտուկի դուրսը բաց օդին մէջ: Գիշերն ալ ցուրտ օդի ազդեցութիւններուն կ'ենթարկուի ամեն մէկ հիւանդ, որովհետեւ այդ հաստատութեան մէջ երբեք չ'ընդունարուի պատահան գոցել գիշեր ատեն որչափ ալ աստիկ ցուրտ ըլլայ ձմեռը: Հիւանդներ կրնան ամենախիստ փութելու ու սառնամանիքներու դիմագրել՝ պատասպարուած ըլլալով տաք ծածկոյթներու առատութեամբ մը եւ գլխուն ու ականջներուն վրայ ալ գլխամետքով մը, մինչդեռ իրաւիք կը շնչեն ցուրտ ու թարմ օդին կենսատու թթուածինը: Աշխարհահռչակ համբաւ մը չ'աչիլ ըսկած է այս հաստատութիւնը թոքախտաւորներու համար ձեռք բերել յաջողած իր բուժումներովը: Այս ակտիւ անբուժելի կը նկատուէր քսան տարի առաջ, բայց հիմա տեւական հիւանդութեանց ամենէն աւելի դուրաւ բուժելիներէն մին կը համա-

րուի: Հիւանդներն տառապողներուն ամբողջ կէսը կապաքինին, երբ բացօթեայ բուժարաններուն մէջ զարմանունն: Եթէ թոքախտը կրնայ թարմ օդի միջոցաւ բուժուիլ, բանաւոր է նաեւ ենթադրել թէ նոյն թարմ օդը կրնայ թոքախտի վարակումն ալ արգելել:

Բացօթեայ մարզանքը ամենէն ազդեցիկ միջոցներէն մէկն է ոչ միայն ակտիւ բանալու, այլ նաեւ մարտողութեան նպաստելու: Կերակուր ուտել մարսել ըսել չէ: Կրնայ մէկը առատ կերակուր լեցնել իր ստամոքսի տոպրակին մէջ, բայց ասով անուշ առած չ'ըլլար երբեք, եթէ ստամոքսէն դուրս չ'տարուին ներս առնուած նիւթերն եւ արեան հետ միանալով չ'երթան չ'բաշխուին մարմնոյ զանազան անդամներուն ու շիւրացուին անոնցմէ: Շատեր կըսեն. «Աւա ակտիւ ունիմ, լաւ կ'ուտեմ կը խմեմ իբրեւ միայն չ'աւելնար»: Պատճառն ա՛յն է որ կերակուրը լաւ չ'մարսուի: Մարտողութիւնն այն գործողութիւնն է որով անոնցին նիւթերը կը փոխակերպուին մարմնոյ կենդանի ու գործն մասերուն, կըլլան շարժող ուժեր ու ձեռքեր, տեսնող աչքեր եւ խորհող ուղեղներ: Մարտողութեան կամ իւրաքանչիւր այս գործողութիւնն զգալով ամենէն ազդեցիկ միջոցներն են ՅՈՒՐՏ ՕՂԸ, ԱՐԵՒՈՒՆ ԼՈՅՍԸ եւ ՉՍՓԱՒՈՐ ՄՍՐ-ՉԱՆԲԸ: Բնութեան այս ձրի պարգեւները մէյմէկ աղբւր են առողջութեան, եւ հետեւապէս մէյմէկ ազդու արգելիչներ կերպ կերպ հիւանդութեանց եւ ակտիւութեան:

Կարեւոր է նաեւ որ ցուրտ եւ թարմ օդի առատութիւն մ'ունենայ մարդ մինչդեռ կը քնանայ: Տաք ու փակ սենեկի մը մէջ քնացողը աստուծոյ պիտի արթնայ չկազդող բուժման վիճակի մը մէջ: Պատուհանը միշտ բաց պահէ գիշերը մինչեւ իսկ ձմեռն ամենացուրտ եղանակին, եւ ասով մեծապէս նպաստած պիտի ըլլաւ առողջութեանդ: Եթէ պաղ առնելէ կը վախնաս՝ գըլուխդ ու ականջներդ պաշտպանէ գլխամետքով մը, բայց այնպէս պառկէ որ երեսիդ վրայ ազատօրէն շնչէ գուրսի օդը:

«ԼՈՅՍ»

ԾԱՆՐԱԿԵԻՒ ՀՐԱԽԷՐ ՄԸ

Գահիրէի ոստիկանութեան Անգլիացի հրամանատար, Հօրկինսն փայլին կողմէն, հինգշաբթի օրը առաջնորդարանը ծանուցադիր մը հասած է, որով Գահիրէի քանի մը Հայոց անունները կը հաղորդուի, եւ կը խնդրուի այդ Հայերը հրաւիրել որ յաջորդ օրը, թէեւ ուրբաթ, կուգէն նորային ներկայանան:

Առաջնորդ Հայը կը պատասխանէ, թէ Ազգային իշխանութեան վերաբերեալ գործ մը չէ, ոստիկանական կոչնագրերը իրենց հասցէին ուղարկել: Սակայն պատասխան կը տրուի որ, արդարեւ առաջնորդարանը իրաւացի առարկութիւն մը կընէ, բայց ոստիկանութիւնը իր առաջարկութեան ընդունելութիւնը իբր պարտականութեան գործադրութիւնը չի պահանջեր՝ այլ իբր բարեացակամ միջամտութիւն մը ի նպատակ հրաւիրելու Հայոց: Հակառակ պարագային, ոստիկանութիւնը կարող է նշանակեալ իւրաքանչիւր անձնաւորութեան կոչնագիր դրել:

Այս առարկութեան վրայ, Առաջնորդարանէն նշանակեալ իւրաքանչիւր անձի իմաց կը տրուի, ուրբաթ օրը կուգինորան ներկայանալ:

Ամէնքն ալ կերթան: Ոստիկանական այս միջամտութիւնը կը վերաբերի, Կ. Պոլսէն «Հընչակեան Մանածիւղ» կնիքով վերջին Օգոստոս ամսուն մէջ, Ունեան Արիկ էֆէնտիի սպանումէն անմիջապէս երեք-չորս օր յետոյ, Գահիրէ եւ Աղէքսանդրիա խրկուած դրամապահանջ նամակներու հրատապ գործին:

Ոստիկանատուն հրաւիրելները կը պատկանին կուսակցական այն խումբին որ մինչեւ 1903 թուականը պարզապէս «Հնչակեան» կը կոչուէին, իսկ անկէ յետոյ «Վերակազմեալ» յաւելուածական մակդիրն կը կրեն, յարուցեալ անդրանիկ Հնչակեաններէն որոշուելու համար:

Մէնսֆիլտ փաշա իր ներկայութեանը կանչած վեր. Հնչակեաններուն կը պարզէ կոչման շարժառիթը, եւ կը յայտարարէ թէ իրենք անձնապէս պատասխանատու պիտի բռնուին, դրամական ո՛րեւէ բռնի պահանջման կամ

անոր հետեւանքներուն համար: Հրաւիրելները կը պատասխանեն, թէ արդարեւ իրենք կը պատկանին, կուսակցութեան մը որուն նպատակը թիւրքոյ Հայոց վիճակին բարելոցումն է, եւ առ այս դրամ կը հանգանակեն, ուստի ուրիշներէ ալ բերանացի կամ նամակաւ, կը խնդրեն իսկ, սակայն նուիրատուութիւնը կամաւոր համարուելով, ըսպառնալիքներու դիմում չ'են ըրած:

Մէնսֆիլտ փաշան կը պատասխանէ, թէ ոստիկանութիւնը երեք ամսուան մանրախոյզ հետազոտութիւններով, գործին ամեն մանրամասնութեանցը կատարելապէս քաջատեղեակ է եւ խումբին պատկանող իւրաքանչիւր անձը իրեն ծանօթ: Հետեւաբար կը յայտարարէ թէ, ո եւ է պահանջման կամ ո եւ զէպքի համար, ամենքն ալ անձնապէս պատասխանատու են:

Ու սորիթէն օգտուելով, Մէնսֆիլտ փաշան եզրպատրասակ Հայոց նկատմամբ շատ համակրական ոճով խօսած է: Դրուատներ է անոնց պատուաճանաչութիւնը, աշխատասիրութիւնը, յառադրիմելու տենչանքն ու ընդունակութիւնը: Ըսած է, թէ կառավարութիւնը միշտ գոհ մնացած է Հայոցմէն եւ անոնց զարգացմանը ամէն դիւրութիւն կընծայէ, ո եւ է պաշտպանութիւն չի զլանար: Բայց անհնարին է թոյլատրել որ Հայը ունեւ հանրային բարեկարգութիւնը խանգարեն:

Ներկայացողները, ո եւ է զէպքի համար պատասխանատու բռնուող որոշման մասին վերջին անգամ մը եւս ուժգնապէս շնչաւորով, Մէնսֆիլտ փաշա ճամբեր է ոստիկանական Ատեանը կանչուողները:

Նմանօրինակ հրաւեր մըն ալ եղեր է Աղէքսանդրիոյ վեր. Հնչակեաններուն, որոնք կովերնորան կանչուելով, հարկ եղած ազգարարութիւններ լսած են:

«ԼՈՒՍԱԿԵՐ»

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Գործադիր Ժողովոյ յ'անուն թշուառ եւ տառապեալներու՝ իւր խորին շը-

պան Ժորժ Բէթրի վաքչամով իրական անուամբ Գրիգոր Վարչամ, Շարլ Եռվանովիչ՝ Ալոտ՝ իրական անուամբ Կարապետ, Թրաւա Եռվանովիչ Թորգոմ՝ իրական անուամբ Արտաշ Գաբաշեան, Թիֆլիսցի Տիգրին Ալքովա՝ ուրիշ անուամբ Անձովա, Սիւս Ենգորիճի, ուրիշ անուամբ Քէօսէ Արիթիտի, ուրիշ անուամբ Վոզոս Վոզան, իրական անուամբ Վահան, կառապան Մկրտիչ Ղարապետ, ձիավար Երուանդ Յրանկիւլեան, էրազմուցի կօշկակար Արշակ, Գարեգին Արսէնեան, Յովակիմ, կայս. քաղաքային Բժշկական վարժարանի ուսանողներէն Մանուկ եւ Անտոն Գօշ՝ իրական անուամբ Ալաճաճեան, Երուանդ Ալաճաճեան եւ Թուհաֆիյէճի Թազուր Եակոբեան:

Վերոյիշեալ ամբաստանեալներու մասին կատարուած հարցաքննութիւններէն հանկուտ է որ իրենց գործած եղեռնական յիշեալ արարքի արդիւնք է, Աստուած մի՛ արաս-

ցէ, Կայսերական կառավարութեան եւ կայսերական երկիրներու կտրդ մը կարեւու տեղերու մէջ, մեծ եւ ընդհանուր խռովութիւն մը յարուցանելու նգովելի ճնշատակովը Պուլկարիոյ, Ժընէվի եւ Թիֆլիսի մէջ գտնուող հայ եւ պուլկար խըռովարարական քոմիթէներու կազմակերպութեանց եւ որոշմանց ու մըտադրուած խռովութեան ձեւին նախելով, յիշեալները ուղած են իրենց ստորին դիտաւորութիւնը իրականացնելու մասնելով որ յոտս կայս. Գահիրէ իրենց հաւատարմութեամբն ու անձնութեանմամբը կատարելապէս հաստատ եղող կայս. զինուորներն ու հաւատարմ հպատակները այդ միջոցին բնականաբար զգացուելով, յուզուած շուտով պիտի տարածուի եւ գործուած անիմպարտ եղեռնը օտար հպատակներու վերագրուելով, անոնց վրայ ընդհանուր յարձակում մը տեղի ունենայ: հակացուած է նաեւ որ նոյնիսկ այս նգովելի որոշում-

ները անցեալ տարի Սօֆիայի մէջ՝ հայ յեղափոխական միացեալ ընկերութիւններու եւ պուլկար խռովարարական քոմիթէի կողմէ ընկերակցաբար կազմուած արտասովոր ընդհ. ժողովի մը մէջ տրուած են եւ այդ միջոցին իր խռովարարական եւ անարդիւնական գաղափարներովը ծանօթ Բէթր Գիյառ անուն ֆրանսացի գրող մըն ալ ներկայ գտնուելով՝ հայ խռովարարական գաղափարներուն իբր համախոհ իր հրատարակած «Բըօ Արմէնիա» անուն լրագրին մէջ համառօտակի խօսած էր այդ կարեւոր գումարման եւ գաղափար որոշումներու մասին, եւ գրած էր թէ հայ խռովարարները պիտի ստիպուէին զիմել այն վրձնական եւ վերջնական գործադրութեանց՝ որոնցմէ ետ կեցած էին մինչեւ հիմա:

Այս խռովարարական որոշումներուն Կ. Պոլսոյ մէջ գործադրութիւնը սկսուած է անիմպարտ պատրաստութիւններով որոնց նախապէս

ձեռնարկած են Պազուի Հայերէն Բրիտանիոյ Միջոցաւեան, — որ Ռուսիայէն վտարուած խռովարարներէն ըլլալով, Դրօշակ Հայ յեղ. ընկերութեան կեդրոնատեղին՝ Ժընէվ վոխադրած է, Դրօշակ յեղափոխական թերթը հիմնած է, եւ անցեալ տարի հոկտեմբերին՝ Պոլս գալով՝ Պելլէրացի մէջ բնակած արարթըման իւրեանցած է մէկ ամսոյ չափ՝ Սամու Էլ Փային կեղծ անուամբ, եւ Ռուսացնա Փայինի հետ՝ զոր իբր իր աղջիկը ներկայացուցած էր, — յետոյ զարձեալ հայ խռովարարներէն եւ երկրորդ աստիճանի վրայ գտնուող Առնապետազեղի վաճառապուհ Քէնտիքեան, եւ Լիբաթիք ուրիշ անուամբ Սաֆօ, ինչպէս նաեւ իրենց վարչութեան տակ գտնուող եւ անուններն վերը յիշուած անձերը, որոնք Կ. Պոլսոյ մէջ խնդրոյ առարկայ եղած եղեռնական նպատակներու գործադրման համար կազմուած խռովարարական ճիւղին կը պատկանէին:

(Շարունակելի)

